

արիասիրու սրբեր, բայց չպիտենք, թէ ինչպէս երկիրը և թուլութիւնը կը պաշարէր նոցա, եթէ Աստուծոյ խօսքը օգնութեան չհասնէր և զօրավիդ չլինէր նոցա:

Մեծ է ուրեմն նորա կենդանաբար զօրութիւնը, որով միփթարում և քաջալերում է մեզ: Երբ մենք ամազում ենք մեր սեփական թուլութիւնից և ըստ գիտենք ի՞նչպէս շարունակենք մեր կեանքը, ի՞նչպէս առաջ գնանք, Աստուծոյ խօսքը մեղ թէ և տալիս և առաջ մղում: Կարգացէք երկնաւոր վարդապետի մահից առաջ կրած չարչարանքները և գուրք կը զգաք, որ քրիստոնեայ էք գէպի նա ունեցած սիրոյ չնորհիւ, նորա անունն էք կրում, և ինչ որ առաջ ձեր աչքում կարեղութիւն ունէր, այժմ չնշին է երկում: և ինչ որ առաջ ձեր հպարտութիւնն էր կաղմում բևեռած է այժմ նորա հետ խաչի վերայ:

Կարգացէք Ս. Գրքում երկնային երանունութեան և փառքի մասին և գուրք կը զգաք, որ յառաջ պէտք է ընթանաք որչափ կարելի է արագ, որովհետեւ ձեր առաջ փայլում է երկնային լուսոյ սպակիլ: Երբէք մարդոս այնպէս բարձր չէ կանգնած նիւթական շահի կամ աշխարհային փառքի հաշիւներից, քան այն ժամանակի, երբ նորա հողին խորաքութեած է ճշմարտութեան հոգու մէջ, որով ներշնչուած է Ս. Գիրքը: Նա ոչ միայն միփթարում է, այլ և վեհութիւն է տալիս:

Եւ ի՞նչպէս յաճախ մեր նախազգուշացուցիչն է նա և պաշտպանը: Ես կը գնայի աջ կամ աչեակի, եթէ որ Աստուծոյ օրէնքը չասէր: «Ճող քո աչքերը նայեն ուղիղ և թող քո արտեանունքները չը շեղուին ուղիղ ճանապարհից»: Ս. Գիրքը յաճախ մեր կեանքի ծովի վերայ փոխորիկ նախագուշակելով՝ համոզում է մեզ, իրրև անզոյշ ծովագնացների, մասլ նաւահանգստում:

Այս Գրքի սուրբ խօսակցութիւնը սրբագործում և կերպարանափոխում է մեր հողին Քրիստոսի ուստի համաձայն: Ընորհը ձեր մէջ չի զարգանալ, եթէ գուրք չէք կարգում Ս. Գիրքը: Եթէ Աստուծոյ խօսքը մօտիկ չէ ձեր որտին, այն ժամանակ գուրք չէք կարող յոյս ունենալ Ասողի վերայ, Եղէք յաճախ Աստուծոյ ո. խօսքի հետ և գուրք ևս սուրբ կը լինէք: Եթէ յափշտակուէք ժամանակակից վեպերով և ամեն տեսակ դատարկ դրբերով ձեր ժամանակը իզուր կը վասնուի: բայց եթէ Ս. Գրքի ուսումը լինի ձեր առաջնորդը՝ այն ժամանակ գուրք խսկական մարդ կը լինիք:

«Եւ յորժամ յառնիցես՝ խօսակից իցէ քեզ», Պատեհում է ժամանակը, երբ մենք բոլորս կը նշն-

ջենք մահուան քնովկ Ո՞չ ինչպիսի երջանկութիւն պիտի զգանք մենք, երբ զարթնինք կրկին, եթէ մօտ ենք եղել Աստուծոյ խօսքին: Նա կը խօսէ այն ժամանակ մեզ հետ և կը նորոգէ իւր բարեկամական յարաբերութիւնը: Այն ժամանակ կը կատարուեն այն խօստումները, որ մեզ կեանք էին տալիս: ապագայ երանութեան մասին եղած բոլոր յայտնութիւնները կիրագործուին և Քրիստոսի գէմքը, որ այժմ երկում է մեզ իրրև մի պլուր ապակու միջից, բոլորովին կը բացուի մեր առաջ և փայլ կը տայ մեզ, ինչպէս արևեն իւր բոլոր զօրութեամբ: Տայ ուրեմն Աստուծուած, որ սիրենք Աստուծոյ խօսքը և մնուինք նորանով, որպէս զի կարողանանք ազգել ի փառ Աստուծոյ մեր կեանքի բոլոր օրերում:

Թարգմ. Ռ. Ս.



ԲԱՐԻՈՅ ԵՒ ԶԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՀԱՄ ԳՐՈՒ ՊԱՌԵԼԱՑՆԻ Բ:

Այն ինդիրը, թէ արգեօք ո՞րտեղից է չարք սկիզբն առել՝ զբաղեցրել է ամէն ժամանակ մոտածող մարզոց, և անթիւ փորձեր են եղել ցոյց տալու համար: թէ հակառակ նորա գոյութեան աշխարհս ոյնուամենայնիւ բարի է: Եթէ մենք այդ փորձը կրկնում ենք, նորա համար չէ անշուշտ, որ ապացուցանենք, թէ իրական աշխարհը բացարձակ բարի է, կամ կարելի եղածների մէջ ամենաբարին: բացարձակի ու անսահման կարելիութեան մասին մեր հասկացողութիւնը հեռու չէ գնում: մենք կարող ենք միայն առել, թէ ի՞նչ է աշխարհը մեզ համար: Այդ նկատմամբ աչա, կարծում ենք, կարելի է ցոյց տոլ, որ նա ընծայումէ մեր բնութեան համապատասխանող զարգայման պայմաններ, մեր ոյժերի արծարծման ծառայող միջոցներ, մեր կետնքին, եթէ ինքներս կամենանք, հարուստ և գեղեցիկ բարգաւառմանն: Մեզ համար այնպէս՝ ինչպէս որ կանք, մի ուրիշ զը-

* System der Ethik, Fr. Paulsen.—Berlin 1894.
B. I. p. 292 ff.

բականապէս տարբեր աշխարհ, ոչ պէտքական լիինէր և ոչ տանելի:

Առջարական է որոշել երկու տեսակ չարեք՝ բնական և բարոյական: Առաջին տեսակի մէջ կարելի է կրկին դանազանել այնպիսինքը, որոնք մեզնից գուրս գտնուած բնութեան մէջ են տեղի ունենում և այնպիսինքը, որոնք մեր օեփական բնութիւնից են կախուած:

Առաջին կարգին պատկանում են այն բոլոր արգելքները, որ բնութիւնը յարուցանումէ մարդու կարիքների և ցանկութեանց գէմ: Հողի սակաւարերութիւնը, կիմայի անախարժութիւնը՝ այն բոլոր չարաբազդ գիպուածները, որոնք աշխատութեան պառզը ոչնչացնում են և կեանքը վտանգի մէջ գնում: Հեղեղ ու ջրութիւն, կայծակ և երկրաշարժ: Այս արգելքներից որը և առնենք կտեսնենք որ անհրաժեշտ է սյն աշխատանք և քաղաքակրթութիւն յառաջ բերելու համար: Եթէ արտը ինքն իրեն ցորեն տար, անտառից ամէն տեսակ պտուղներ առատութեամբ քաղցինք՝ ոչ երկրագործութիւն կլինէր և ոչ սցգեգործութիւն: Եթէ կիման ամենուրեք մարդու հաճոյ բներին համապատասխան լինէր, բնակարանների պէտք չէր զգացուի: Եթէ մեր բոլոր կահկարտասիքն ծառերի վերայ բումէր և տարին մի անգամ երկնքից կօշիկներ թափուէին մեզ համար՝ արհեստները աւելորդ կդառնային, ծուլութեան և քնի մէջ կանցնէր մեր կեանքը: Նոյնը պէտք է առել նաև պատահական գիբաղդութիւնների մասին: Ի հարկ է գտուար է ամէն մի մասնաւոր գէպքում պարզել և համոզել, որ պատահած չարիքը անհրաժեշտ էր և բարերար հետեւանքներ ունի. բայց կարելի է խորհուրդ տալ և օգնել մարդոց, այդպիսի չարիքներ դէպի բարին գարձնելու: Սովորաբար, երբ մենք ժամանակ անցնելուց յետոյ յիշում ենք այն գիբաղդութիւնը, որ սեփական ուժերով և ուրիշի օգնութեամբ յաղթահարել ենք՝ նա այլ ևս իբրև չարիք է երեւում մեզ առաջի կարելի մէջ իրենց արժէքն ունին: Քրիստոնէական հաւատը իրաւոնք ունիշ մեզ սովորեցնելու, որ չարեւաց նպատակը մեր փրկութեան համար իբրև փորձութիւն ծուլուց է:

Դման եղրակացութեան կգանք, եթէ մեր մարմնոյ և հոգւոյ թուլութիւնից յառաջ եկած՝ զրկանքներն ինկատի առնենք: Կարելի է երեակայել այնպիսի մի մարմնն որ ոչ մի վնասակար ազդ եցութեան չենթարկուէր, անշամեմոտ աւելի ոժեղ և դիմացկուն լինէր քան մեր մարմնը. կարելի է նաև այնպիսի բանականութիւն երեակայել որ շատ բարձր լինէր մերից, գիտութեան ու ճշմարտութեան հասնելու համար մոլորութիւնների և նախապաշարումների գէմ կուռելու պէտք չունենար՝ բայց դժուար չէ նախատեսել որ հետեւանքը նոյնքոն պակացնկալի լինէր, ինչքան վերև յիշուած գէպքերում: Երկրի պառուզը մեզ համար այն գինը չէր ունենայ, ինչ որ ունի, եթէ առանց քրտինքի ձեռք բերուէր, ճշմարտութիւնը մեր աչքում այնպէս վսեմ չէր երեաց, եթէ ամէնքի համար պատրաստ արուած լինէր:

Մինչև իսկ հիւանդութիւնն չու մարմնական պակասաւթիւնները յառաջադիմութեան նշանաւոր շարժիքներ են. նոյն պատճառով են զարգացել բժշկական գիտութիւնները, մարմինն ու կեւանքը ուսումնառիթութեան առարկայ գարձել: Հիւանդութիւնը կրթիչ ազգեցութիւն է գործում թէ հիւանդի և թէ շրջապատղների վերայ սովորեցնումէ խոհեմութեամբ գործ գնել կենսական ոյժերը. նա մի մեծ գալրոց է համբերութեան, անձնութեամբ նաև սիրոյ և գթասրտութեան համար՝ յատկութիւններ, որոնք ամբողջ կեանքի մէջ իրենց արժէքն ունին: Քրիստոնէական հաւատը իրաւոնք ունիշ մեզ սովորեցնելու, որ չարեւաց նպատակը մեր փրկութեան համար իբրև փորձութիւն ծուլուց է:

«Թեթև՝ աղաւնին, առումէ կանու որ աղատ թուչքով օդը ձեղքելիս զգում է նորա գիմաղը ութիւնը՝ կմաածէ գուցէ, թէ անօդ տարածութեան մէջ աւելի հեշտ կլինէր թուշելը: Բայց իրօք ինչպէս օդի գիմաղը ութիւնն անհրաժեշտ է թուչելու համար, այնպէս էլ

առարկաների մեր կամբին ցոյց տուած գիմազրութիւնն է անհրաժեշտ. մեզ համար չկայ գործունեութիւն առանց զիմաղրութեան, չկայ երջանկութիւն առանց արգելքների:

Ըստ երեսութիւն խնդիրն աւելի ծանրանումէ, երբ խօսքը բարոյական չարեաց մասին է. սակայն գժուար չէ նաև ոյստեղ ցոյց տալ ինչքան էլ այդ ասրօրինակ թուի, թէ բարոյական չարիքն իսկ ուրեմն չարութիւնն ըստ ինքեան՝ մի անհրաժեշտ տարր է իրերի բնական կարգի, կամ մարդկային ազգի պատմութեան մէջ: Կա ունի երկու հիմնական տեսակներ՝ զգայականութիւն և անձնասիրութիւն: Առաջինը ամփոփումէ իւր մէջ այն բոլոր թուլութիւնները և մոլորութիւնները, որոնք յառաջ են գալիս, երբ խօհականութիւնը կարցնում է զգայական ցանկութիւններին զեկավարելու ոյժը. անժամանակ արմատ է այնպիսի մոլութիւնների, որոնք ուղղուած են ի վնաս շրջապատպ մարդոց. ագահութիւն, անարդարութիւն, չարասրտութիւն, ամերտաւանութիւն: Երկու տեսակներն էլ մենք մէջտեղից վերցնել չենք կարող, առանց պակասացնելու նոցա հակառակ բարիքների ոյժը: Խնչպէս առաջին կարգի առաքինութիւնները՝ լրջմբութիւն, տոկունութիւն, քաջութիւն, այնպէս նաև երկրորդ կարգին՝ արդարութիւն, բարի կամեցողութիւն՝ ամենելին հիմք չէն ունենայ, եթէ մարդու զգայական բնութիւնը իրըւ մի զիմաղիր ոյժ չներկայանար, որը յաղթաշարել պէտք է: Այս ճշմարիս է ոչ միայն անձնական, այլ և օտար մոլութիւնների նկատմամբ, որոնց ազգեցութեանը մենք ընկերական կեանքի մէջ ենթարկուում ենք: Անարդարութիւն տեսնելը կամ կրելը մեր մէջ յառաջ է բերում գաղափար և հասկացողութիւն օրէնքի մասին. ստութիւնն ու խորամանկութիւնը բարձրացնում են մեր ուշքում ճշշմարտախօսութեան և արդարտամութեան ար-

ժէքը. խստասրտութեան և չարութեան մօտ փայլում են բարեհոգութիւնն ու ազնուութիւնը: Զուր չէ բանաստեղծի մէկը զանազան տեսակ պակասութեանց տէր մարդոց իւր ուսուցիչներ անուանել: Մարդկութեան բոլոր հերոսները չետ կառելով են դարձել այն, ինչ որ են: Սոկրատէսի կենդանագիրը լրիւ չէր լինի առանց նորա մաշուան դատապարտուելու և ենթարկուելու պատմութեան: Զիայ մի պատկեր, որ աւելի յուղիչ աւելի պաշտելի, աւելի սփոփիչ լինէր՝ քան խաչեցեալի պատկերը. բայց նկորագրել նորան չէր կարելի առանց իւր պատմական շրջապատի, առանց փարիսեցների և գվիրների, անձնահամ քահանայապետի և երկչոս գատաւորի, մոլեռանգ ամբոխի և բիրոտ զինուորների: Մի խօսքով, հանել չարը պատմութեան միջից՝ նոյն է թէ հանել բարւոյ կոփւր նորա գէմ: այսինքն այն ամենավսեմ և ամենամեծ բանը, որ մորդկութիւնը ներկայացնել կարող է՝ բարոյական հերոսութիւնը: Բայց ոչ միայն այս, այլ նաև ամբողջ պատմութիւնը կկորցնէ իւր բովանդակութիւնը: Պետութիւն և եկեղեցի, իրենց բոլոր բարդ կազմակերպութեամբ, նշանակութիւն ունին միայն այն գէպքում: Երբ մարմնաւոր և հոգեսոր բարիքները պաշտպանել ու զարգացնել պէտք է հակառակ չարի ներգործութեան:

Խնդիր է սակայն, արգեօք նորա համար, որ չարը մի անհրաժեշտ օղակ է իրերի բնական կարգի մէջ, օրինաւոր է նորա գոյութիւնը և իւր սեփական արժէքն ունի: Այդ ի հարկէ մեր կարծիքը չէ ամենելին: Չարն ինքն իւր համար տասած ոչ մի արժէք չունի և ոչինչ գոյութեան իրաւունք. նա միայն բարւոյ համար է, սորա գործունէութեան և իրագործման շարժառիթ լինելու համար: Այստեղ նոյն յարարերութիւնը կայ, ինչ որ լուսոյ և խստարի մէջ: Նկարիքը չէ կարող առանց ստուերների նըրկարել: բայց այն, ինչ որ նա ցոյց տալ է կամենում՝ ստուերը չէ, ոյլ լոյսն ու գոյները: Այսպէս նաև կեանքի և պատմութեան

մէջ։ Չարը բացասութիւն է, ոչնչութիւն։ միայն բարւոյ զիմագրութեան շնորհիւ նա մի տեսակ իրականութիւն և գործունէութիւն ունի։ Բայց նորա գործունէութիւնը յօգուտ իրեն չէ։ Նա շինող զօրութիւն չունի։ որովհետեւ պատակուած է ինքն իւր մէջ։ Նա ունի, ինչպէս կանան ասումէ, «այն իւր բնութիւնից անբաժան յատկութիւնը, որ հակառակումէ ինքն իրեն և քայքայում»։ Այդ նկատելի է նաև նորանից, որ զրական անբարոյականութիւն չկայ անբարոյականութիւնը, ինչպէս և մալորաւթիւնը, օրէնք չէ ճանաչում։ Բայց ճշմարտութիւնները կարելի է մի սիստեմի վերածել, բայց մոլորութիւնների համար սիստեմ՝ չկայ։ Նշանից շեղուելու համար, ասումէ է կաղիկտէու, նպատակակէտ չկայ դրած։

Ահա այս մոքով է բացատրում գէօթէն մարդկային պատմութիւնը իւր նշանաւոր ֆառաւուսութերեցութեան մէջ։ Պատմութիւնը իրենց բնական դիրքի մէջ է գնում չարն ու բարին, որոնք ներկայում կարծես փօխել են իրենց դերերը։ Նա բարձրացնումէ և ամբողջ աշխարհին յայտնի է կացուցանում բարին ու մեծը, որ իւր ժամանակին ստրկական կերպարանքով էր շրջում ու դատապարտեալի նստարանի վերայ էր նստած, և ի ջիք գարձում ու մերկացնում իւր ոչնչութեամբ չարն ու ստորը, որ երեմն փառահեղ շուրջով ճեմել է աշխարհի վերայ և իւր գործակալների ճռնչող ճառերով իրեւ մեծ և իրական ինչ հաջակուել։ Այսպիսով նա չարից բարի արգիւնք է հանում։ Դուք չար անել մտածեցիք, բայց Աստուած մտածեց բարի անել՝ ահա թէ ի՞նչ է սովորեցնում մեզ պատմութիւնը։ Այդ սովորեցնում է մանաւանդ աշխարհի վերայ տեղի ունեցած ամենամեծ պատմութիւնը՝ Ֆիսուսի պատմութիւնը։ Չկայ աւելի հոգի և սիրտ տուող մի պատմութիւն, քան նորա չորչարանաց նկարագիրը։ Ինչքան մեծ էր երեւակայում իրեն Պիղատոսը, երբ նա դատաստանի էր նստած Յիսուսի վերայ։ Ո՞չ զիտես, եթէ իշխանութիւն ունիմ հանել

զքեղ ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեղ։ Կա մոքով անգում անցկացնել չէր կարող, թէ իւր առաջ կանգնած այդ ողորմելի Հրէայն վասնգաւոր մի մարդ կլինի։ ուր մնաց այնպիսի մէկը, որ կոչուած էր տիեզերական պատմութեան ընթացքը շրջելու։ Կարիք իսկ չկար Նորան մէջտեղից վերցնել։ Հոռվմէական պետութեան խաղաղութիւնը վրգովնութեան կարողութիւն Կա չունէր։ Բայց քանի որ այդ անտանելի Հրէաները իրենից ձեռք չպէտք է քաշէին, շարունակէին պէտք է իրենց աղաղակներով ու բողոքով անշանգիստ անել՝ ի՞նչ վնաս, արգեօք մի թշուառական մէկ երկու օր աւելի կապրի, թէ պակաս, արժէ գորա համար սիրտ պըլտարել։ Եւ ահա աղմակը իւր գլխից հեռացնելու համար՝ նա նոցա ձեռքն է տալիս անմեղ դատապարտեալին։ — Խոկ այժմ։ Ինչպէս փոխուել են գերերը։ Պիղատոս վաղուց անյայտացած կլինէր յաւիտենական մոռացութեան ծովի մէջ, որ այնքան դատաւորներ ու քահանայապեաններ է կլանել, եթէ նորա անունը կապուած զինէր այն անձի յիշատակի հետ, որին նա խաչ հանել տուեց։ Խաչելութեան պատմութիւնը դժուար է անել առանց Պիղատոսի անունը յիշելու։ Եւ այսպէս, քանի գեռ աշխարհիս վերայ պատմական յիշողութիւն կայ, պէտք է պատմուի միշտ այդ իւր հանգստութիւնը որոնող, ճշգասէր անշուշտ, բայց եթէ կարելի է նաև արդարութեան պաշտպան՝ դատաւորի վճռի մասին։ Ինչպէս որ յաւիտեան պէտք է պատմուի այն շրջահայեաց քահանայապեալի պատմութիւնը, որ այնպէս պարզ կերպով համոզել գիտէր թէ իրեն թէ իւր ատենակեցներին։ Պաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս և մի ամենայն աղքս կորիցէ։ Ոչ թէ նոցա մատուցած ծառայութեան կամ պատուի համար կապատմուի այս պատմութիւնը, այլ աշխարհիս բոլոր ծայրերում գտնուած քահանայապեաններին և դատաւորներին հասկացնելու, որ նոցա վճիռը, մարդոց և իրերի արժէքի մասին վերջնական չէ, և ընդ-

Հակոսաւին բոլոր արգարութեան համար հարցածուածներին և դատապարտուածներին այն մինիմատրական վասահաթիւը ներշնչելու, որ նոցա դատոր տեիլի բորձր մի տաեանի առաջ պէտք է վճռուի քան ներկայ դատաւորներն են:

ԲԱՐԱԿԵՆ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐԹԱՒԱԿՈՒՄ

ԿՈՐԱՐԱԿԻ ԵԿԵՂԵՑԻ

— Առօմնաց պատի, Լեռն ԺԳ-ի, առողջութեան մասին տարածուած աննպաստ լուրերն ստուգուում են Խորին ծերութեան հասած քահանայապետն հետզհետէ ուժասպառ է լինում, այս ամսուան ընթացքում տեղի ունեցած Կոնսիստորի ու մի ժամանակ պապին պատգարակով են ներս բերել, Մարմնի տկարութիւնը սակայն ոչ մի կերպ չէ նրուազեցրել Հռովմի քահանայապետի հոգեկան եռանդը. այդ եկեղեցական համագումարի մէջ նա կրկին ցորց է տուել իւր անշեղ ընթացքն ու գործունեութեան ոյժը, Պապն առիթ առնելով ներկայ քաղաքական անցքերից, խօսել է և հայկական ինդրի մասին, նա ցաւ է յայտնել քրիստոնէից հալածանքի վերաբերութեամբ և խոստացել է օգնութիւն հասցնել կոտորածներից ազատուած հայերին, Տաճկաստանի տառապեալ հայերի համար ի հարկ է թանգ արժէ այժմ ամէն մի քրիստոնէական օժանդակութիւն և երանի թէ այս անգամ պապական օգնութիւնը զուտ քրիստոնէական լինի և ոչ ըստ սովորութեան հոգմէական եկեղեցու շահագիտական, Յոյս ունինք որ քրիստոնեայ աշխարհը իւր օգնութիւնն այս նուագ գոնէ փոխարինարար չի անիլ և ձեռք կը քաշի տառապեալ ժողովրդին հաւատափոխութեան զնով օգնութիւն հասցնելուց:

Լեռն ԺԳ. մի այլ նշանաւոր յայտարարութիւն ևս արել է, այն է՝ որ ինքը վերականգնուում է Աւլքասանդրիոյ պատրիարքութիւնն Ապահների համար, Յոյս հանդիսաւոր ժաղովից յեաց պապը Զկ նոր եպիսկոպոսներ է ձեռնազրել և մի քանի եպիսկոպոսների ևս կարդինալութիւն է տուել:

— Ս. Գրեգորի ֆրանսերէն թարգմանութեան վերաբնութեան գործն յառաջադիմումէ հետզհետէ, նոր Կտակարանի վերասուրգութիւնն արգէն իսկ աւարտուած է, իսկ Հին Կտակարանի վերաբերութեամբ յանձնարարուած է շատ հմտու ուսուցիչ-

ների և հոգեօրականների, որ իրենց նկատողութիւններն հաղորդեն սինողական յանձնախմբին, յոյս կայ, որ բոլոր գործն աւարտի մինչև 1896 թուին:

— Կիրակինօրեայ հանդսութեան ինդրին Կտակարայում գեռ ևս յարուցուած չէ, ինչպէս հոգմէական կայորութեան օրերում այնպէս էլ այժմ Կտակիոյ քաղաքներում կիրակին հասարակ օրուանից չէ զանազանութեամբ որովհետեւ ժողովուրդ միակերպ աշխատում է թէ կիրակին և թէ հասարակ օրերին: Եյս չարիքի առաջը ոչ կաթողիկէ եւ կեղեցին է տուել և ոչ էլ երկրի օրէնսդրութիւնը, այժմն հիւսիսային Կտակիայում ձայներ են լսուում կիրակին սրբութեամբ պահելու մասին, որ երեկ շուտով արձագանդ կը գտնի թէ եկեղեցական և թէ աշխարհական շրջաններում:

— Այս տարի յունիս ամսին Վեհասմինստրում հիմը ձգուեցաւ կաթոլիկաց մայր եկեղեցու, Սասկահի լինի Ենգլիայ մեծագոյն եկեղեցին, Եկեղեցու միջին նաւի տարածութիւնը պիտի լինի 13.800 քառակուսի սոնաչափ, իսկ բոլոր չենքը պիտի բռնէ 54.000 քառակուսի սոնաչափ: Եկեղեցին շինուում է բազելիկի ձեռլու որովհետեւ գոթական ոճով շինելու համար շատ մեծ ծախը է պահանջուում: Շենքը պիտի աւարտուի երեք տարուան ընթացքում:

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

1. ՏԵԿԵՐԱԿԱՆ ՊՈՏԲԻՈՐՔՈՒԹԻՒՆ.

— Տիեղերական պատրիարքը մի շրջարերական կոնդակով պատասխան է տուել Հռովմի պապի միութեան հրաւերին: Եյս շրջարերականը, որի բառացի թարգմանութիւնը տպագրուած է ռուսաց «Եկեղեց. Համբաւարերում» (Ն 44 և 45) հերքում է պապի պատմական և գաւանական պատճառաբանութիւններն, և թէ «Երարատի նեղ էջերը թոյլ տան» մենք այդ կոնդակից կը հրատարակենք քաղուածօրէն գլւխաւոր կէտերը:

— Տաճկաց կառավարութիւնը գո՞հ չը լինելով Կ. Պոլի յունաց պատրիարքի չեզոք գրութիւնից հայերի վերաբերութեամբ, առաջարկութիւն է արել Անթիմոս պատրիարքին, որ գոհանակութիւն յայտնէ Սուլթանի կառավարութիւնից և դրուատելով գաւառների բարօրութիւնը՝ Հերքէ բարենորդմանց կարեռութիւնը: Պատրիարքական խորհուրդն այդ առաջարկը մերժել է, աչքի առաջ ունենալով, որ Ենատուի անկարգութիւնների մէջ և յոյներն էլ մեծամած վնասներ են կրել: